ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԼՈՒՅՍ
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՏԻԿԻՆ Ա. ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Սամսոնյան.

Ի պատասխան Ձեր 15.10.2018թ. հ. Ե-3/02 գրության՝ տեղեկացվում է.

«Ֆիշ Քլաբ» ՍՊ ընկերության հետ 2018 թվականի մայիսի 7-ին կնքված՝ Արամի փողոց հ.64 թիվ 113, 114 և 130 հասցեներին հարակից հատվածում գտնվող 114.4 քմ ընդհանուր մակերեսով տարածքում հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայություն կազմակերպելու համար պայմանագիրը գործում է մինչև 2018 թվականի նոյեմբերի 1-ը: Համաձայն պայմանագրի՝ տարածքն ենթակա է ազատման ու պատշաճ տեսքի վերականգնման սույն պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում: 2019 թվականին «Ֆիշ Քլաբ» ՍՊ ընկերության կողմից նշված տարածքում հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայություն կազմակերպելու համար դիմում-հայտ ներկայացնելու դեպքում հաշվի կառնվեն բարձրացված հարցերը:

«Ֆիշ Քլաբ» ՍՊ ընկերության տնօրենը գրավոր զգուշացվել է պայմանագրի ժամկետի ավարտից հետո գործունեություն չիրականացնելու և տարածքը նախկին տեսքի բերելու ուղղությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ